Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի ՛՛Վայքի հիմնական դպրոց՛՛ ՊՈԱԿ-ի ՛՛Ֆիզկուլտուրա՛՛ (6 դասաժամ), ՛՛Կերպարվեստ՛՛ (6 դասաժամ), ՛՛Իմ հայրենիք՛՛ (8 դասաժամ), ՛՛Բնություն՛՛ (6 դասաժամ), ՛՛Քիմիա՛՛ (2 դասաժամ), ՛՛Մաթեմատիկա՛՛ (10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 23 -ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 11-ին:

Մրցույթը տեղի կունենա Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Վայք Ալավերդյան 17 , հեռ. 028222616, 094882116